Բագուի նաւթաքաշի և գաւառական ոստիկանութեան գործունէութեանը սենատոր Կուզմինսկին նւերում է 94 երես։ Ամբողջ գլուխը կատարեալ մեղադրական մի ակտ է և գրված է ազատ ու կրակոտ լեզուով։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ լրագրական մի յօդուածում ոչ մի հնարաւորութիւն չը կայ առաջ բերելու բոլորը, նոյն իսկ ամենահետաքրքիր փաստերը, որոնք յիշված են տեղեկագրի մէջ։ Բաւականանք աւելի էական մասերով։

«Բակու

ՊԱՏԱՍԽԱՆ «НОВОЕ ВРЕМЯ» ԼՐԱԳՐԻՆ

I

Ինչպէս յայտնեցինք, պ. Ի. Վերմիշեվ յիշեալ լրագրին ուղղած նամակով, որ տպված է «Русь» լրագրում, կամենում է ապացուցանել վիճակագրական փաստերով, որ հայ ժողովրդի մեծամասնութիւնը հողագործ—աշխատաւոր է և ոչ հարստահարող, շահագործող (էքսպլուատատոր), ինչպէս պնդում է «Новое Время» լրագիրը։

«Կուզել հայերի «հարստահարութեան» կանխակալ կարծիքի հետ հնարաւոր է միայն վիճակագրութեամբ, ուստի ես ևս դիմում եմ Ռուսաստանի ամենատոյժ վիճակագրութեան, այն է 1897-ի միօրեայ ցուցակագրութեան։ Դժբախտաբար, դուրս եկաւ, որ այստեղ ևս թուանշանների կեղծ դասաւորումն կայ, փաստերի միտումաւոր լուսաբանութիւն—կամաւոր կամ ոչ կամաւոր, չը գիտեմ։

Բանը նրանումն է, որ պ. Բրիւնեվմանն, միօրեայ վիճակագրութեան հետևանքների ընդհանուր եզրակացման խմբագիրներից մէկը, գտնելով, որ «այնպիսի երկրագործական երկրում, ինչպէս Ռուսաստանն է, այն ազգերը, որոնք չեն կարող (երկրագործական աշխատութեամբ) կուլտուրա մացնել երկրի մէջ, ամենից քիչ օգտակար տարր են հանդիսանում և այդ ազգերի զբաղմունքը երկրի բնակիչների շահագործութիւնն է», կազմել է—XXVI տախտակին իրրև բացատրութիւն իր տախտակը, ուր որոշել է այս և այն ազգութեան պատկանող այն անձերի տոկոսային յարաբերութիւնը, որոնք ապրում են գիւղատնտեսական աշխատութեամբ։ Այդ տախտակով, պ. Բրիւնեվմանը դուրս է բերել, որ հողագործ հայերի տոկոսը 43 է։ Եւ այդ նա պնդում է այն ժամանակ, երբ միևնոյն երկրորդ հատորում, ուր իրրև առաջարան, տպված է յիշեալ տախտակը, վիճակագրական կոմիտէի ստաց խմբագիր պ. Պատանովը գրում է թէ հայերի 4/5-ը պատկանում է գիւղական ազգաբնակութեան։ Բրիւնեվմանը, թոյլ տալով այդպիսի սխալ, դրա հիման վրա եզրակացութիւն է անում, թէ հայերը «նշանաւոր չափով հանդիսանում են երկրագործական աշխատութեան շահագործողներ, պարզվելով գիւղական արդիւնքների գնմամբ և վաճառմամբ»։ Եւ այն ժամանակ, երբ շվեդացիների վերաբերմամբ, պ. Բրիւնեվմանը գանում է, թէ նրանք «բաւականաչափ պարապվում են երկրագործութեամբ, որովհետև նրանց 35, 27 տոկոսը ապրում են այդ զբաղմունքով»։

«Ինչի համար շվեդացիները, կազմելով 35 տոկոս, «շահագործող» չեն համարվում, իսկ հայերը կազմելով նոյն իսկ անճիշտ 43 տոկոսը, արժանանում են այդ մականունին—դրա գաղտնիքը միայն ինքն պ. Բրիւնեվմանը գիտէ։

«Բայց խնդիրը նրանումն է, որ գիւղական անտեսութեամբ զբաղվող հայերը, ոչ թէ 43 տոկոս են կազմում, այլ 70։ Ցիշեալ XXVI տախտակի մէջ ցոյց տուած Կայսրութեան մէջ գտնվող 1,173,096 բոլոր հայերից երկրագործութեամբ զբաղվում են 821,573 հոգի կամ մօտ 70 տոկոս, այսինքն այնքան, ինչքան են ռուսները։

«Ուրեմն ներքին գործերի մինիստրութեան պաշտօնական հայերին «շահագործող» մակդիրը տալը մի նոր զրպարտութիւն է և չարամիտ հէգեմոն»։

II

Փաստանակ է խելքի գալ

«Տպում ենք Ի. Վերմիշեվի նամակը, որ պատասխանում է «Новое Время» լրագրին, հայերի շահագործական հակումների մասին նրա շօշափած խնդրի առիթով։ Նամակի հեղինակը դիտում է վիճակագրութեան օգնութեան և զարմանալի հակասութիւն է դտնում վերջին ժողովրդագրութեան ընդհանուր գումարի հետևանքների հետ։ Հայ երկրագործները այդ վիճակագրութեամբ կամ 80, կամ 70 կամ, վերջապէս 43 տոկոս են կազմում ամբողջ հայ ազգաբնակութեան։ Վերջին թուանշանը, ըստ երևոյթին, բոլորովին ֆանտաստիկական է։ Բայց նոյն իսկ այդ անհաւանական միջին տոկոսը կարող էր բոլորովին հերքումն համարել այն սուտ զրպարտութեան, որ բարվում է մի ամբողջ ազգի վրա։ Հայերը, ճշմարիտ որ աչքի են ընկնում խիստ զարգացած անտասանութեամբ իր բոլոր դրական և բացասական կողմերով, որ սովորաբար նրանց երեսին են խփում իբրև յանցանք նրանց զրպիները իրանց ընտանական հաշիների մէջ։ Հայերը համբերութեամբ զբաղվում են առևտրով, պահանում են միմեանց, բայց չեն կորցնում իրանց նաև, երբ միայնակ են մնում։ «Նրանք շատ միացած և գործունեայ են»—դրա մէջ է մշտական մեղադրանքը նրանց դէմ մեր բիւրոկրատիայի կողմից։ Բայց այդ քաջքայվող աւերակները (բիւրոկրատիայի) ատամներին և սատանային ինչ է յարմար։ «Բաժանիր և իշխիր»—քրս տուր մէկին միւսի դէմ, գոր ամեն մէկի համար մի թշնամի իր զրպտու մէջ և քո սեպհական թագուհիդ անկատելի կը մնայ—այդ եղկելի իմաստութիւնը, որով ապրում էր մինչև այսօր քայքայվող բէժիմը, պէտք է մոռանալ։ Ժամանակ է վերջապէս, թողնել այդ ամօթալի սովորութիւնը՝ մշտապէս հալածել և գլդռել մեր այլացեղ համաքաղաքացիներին գոնէ հէնց այն ժամանակ, երբ մեր առաջ դրված է պետական միասնաւոր շինարարութեան դժուար աշխատութիւնը։

(Русь)

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Բաքվանի, 7-ին փետրվարի

Խուզարկութեան մասնվեց Սև քաղաքի հիւանդանոցը, բայց արդիւնքը գոնէ ինձ յայտնի չէ։

Փետրվարի 6-ը առանձնապէս աչքի ընկնող ոչինչ չը թողեց, նա անցաւ սովորական օրերի նման. երկու կողմից էլ թռուցիկներ էին բաց թողել, կոչելով ժողովուրդին խաղաղ աշխատանքի. միայն Բաքվանու հիւանդանոցը ոստիկանապետը մի քանի կօզակներով եկել, և ասել, որ «իբր» թէ հայերը ուզում են յարձակվել թուրքերի վրա... Դատապարտելի է ազգամիջոցայիի վերաբերմունքը դէպի հայ բանւորները Բաքվանում. նրանք դիմել են դարձեալ հին պօլիտիկային, տեղ տալով արիւնուռչտ աւազակներին, իսկ հայերի համար ազատ տեղ չը կայ... Նրանց կարծիքով, ուրիշ կերպ էլ չէ կարող լինել. բանւորների մեծամասնութիւնը Երևանի գիւղերից են, որոնք գունէ Մանթաշեանում զրպռել են ադմինիստրացիայի ատելութիւնը դէպի իրանց, թէ ինչով, չը գիտեմ։

Ա. Զանեանց

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՄՍ ՎԻՏՏԷԻ ՄՕՏ

Կոմս Վիտտէն յունվարի 29-ին ընդունեց հոգևորական թէ աշխարհական եօթ հոգուց բաղկացած մի մահմեդական «լուսամաւորութիւն, որը նրան ներկայացրեց հետևեալ բովանդակութեամբ տեղեկագիրը։ Ձերդ Գերազանցութիւն! Մինիստրների կոմիտէի նախագահ լինելու ժամանակ մահմեդականները ձեզ մատուցել են բազմաթիւ խնդրագիրներ և կայսրութեան մահմեդականների պատգամաւորները ձեզ ներկայանալով խնդրել են, որ օգնեք իրանց հոգևոր գործերի կարգադրութեան և կանոնաւորման, ինչպէս և իրանց իրաւունքների հաւասարեցման միւս ազգութիւնների իրաւունքների հետ։ Ցիշեալ խնդրագրերը, ինչպէս առնասարակ օտար կրօնքների մասին նոր մշակվելիք օրէնքները՝ Բագնաթիվի նախագահութեան տակ գտնվող մասնաժողովին յանձնվել էին։ Մահմեդականների վերաբերեալ հարցերը յիշեալ մասնաժողովը յանձնել էր պ. Զերվանսկուն։ Պ. Զերվանսկու դէպի մահմեդականները ունեցած հայեցակէտը պարզ ու ակներև է նրա «Մահմեդական աշխարհը և նրա միութիւնն ու զարթնումը» անունով աշխատութիւնից։ Լրագիրներում լոյս տեսած լուրերի համաձայն, պ. Զերվանսկու տրամադրութիւնից և ուղղութիւնից մահմեդական ազգութեան համար ոչ մի օգուտ չէ սպասվում։ Այս բանը Ռուսաստանի մահմեդականներին չափից աւելի անհանգստացնում է։

Հետևաբար մահմեդական ժողովուրդը ցանկանում է, որ մահմեդականների վերաբերեալ հաստատվելիք կանոնները՝ Պետական Դումայի քննութիւնից չանցած՝ Կայսրին չը ներկայացվին վաւերացման համար, որովհետև մահմեդականները յոյս ունեն, որ իրանք կունենան իրանց սեպհական ներկայացուցիչները Դումայում։

Պատգամաւորները կոմսի առաջ նորից շեշտեցին, որ մահմեդականներն խնդրագրերը ընկել են մահմեդականատեաց Զերվանսկու ձեռքը և այդ բանը վերին սատանի անհանգստութիւն է պատճառում մահմեդական ժողովրդին։ Հետզհետէ աճում է մահմեդականների մէջ վրդովմունքը, վիշտը։ Երգրնեերում զանազան, միմեանց հակասող լուրեր են լոյս տեսնում։ Մահմեդականները մեծել են շուարած, չգիտեն որին հաւատան։ Ահա այս պատճառով ցանկալի և նպատակայարմար է, որ մահմեդական հարցերի լուծումը ծածուկ, գաղտնի չը պահվի։ Անկասկած այդ միջոցով միայն կարելի պիտի լինի մահմեդական ժողովրդին հանգստացնել ու անդորրացնել։

Կոմս Վիտտէ վճռականապէս յայտնեց պատգամաւորութեան, որ մահմեդականներին պիտի շնորհվի կատարեալ հաւասարութիւն և նրանց վերաբերեալ ոչ մի սահմանափակում չը պիտի լինի։ Այդ մասին թող մանգամայն հաւատացած լինեն։ Իգնատիեվի նախագահութեան տակ գործող յանձնաժողովը գիտ ևս կառավարութիւն չէ նշանակում։ Կառավարութիւնը մահմեդականների վերաբերմամբ պիտի զեկավարվի այն սկզբունքներով, որոնք արտայայտվել էին իր նախագահութեամբ գործող միինիստրական նախկին ժողովի վճիռների մէջ։ Մահմեդականները վստահ թող լինեն, որ իրանց վերաբերմամբ բոլոր կանոնները կանցնեն Պետական Դումայի քննութեան բովից։

ԻՆՉՊԷՍ ԻՆՁ ԳԵՐԻ ՎԵՐՑՐԻՆ

(Նամակ Խմբագրութեան)

Գանձակի թուրք հասարակութեան ներկայացուցիչներ՝ ալոնդ Փիշամազզադէի, Ալէքպէր-բէգ Բաֆիբէգօվի և այլն, նամակի մէջ, որ տպագրած էր «Նոր. Օրօդ.» թերթի № 15-ում, ի միջի այլոց սխալ կերպով է լուսաբանված յունվարի 9-ին իմ վերաբերմամբ գործադրված բռնութեան զգուելի փաստը։ Ուստի ի նկատի առնելով, որ այդ փաստը քանիցս շօշափվել է մեր մամուլի մէջ, պարաք եմ համարում յիշատակել նրա մի քանի մանրամասնութիւնները ձեր թերթում այնպէս, ինչպէս որ տեղի է ունեցել իսկապէս։ Յունվարի 8-ին ես ճանապարհեցի աղջկանս ուղղակասան երկաթուղու։ Գանձակ կայարանը։ Երբ ես վերադառնում էի քաղաք դիւղական պահակների ուղեկցութեամբ, առանց որի հայի համար անկարելի էր, նոյն իսկ այժմ անկարելի է գնալ քաղաքի թուրքական մասը, ճանապարհին ինչ որ լաւ հագնված թուրքեր պարսաւեցին ինձ, որ ես էլ եմ պահանջներով գնում։ Ցաղորդ օրը, սառնալիք ունենալով պօստի գրասենեակում, որ գտնվում է թուրքական մասում, բայց հայկականից ոչ հեռու (60 քայլի վրա) ՃամբավաՀէյսկի փողոցում (ամենագլխաւոր և ապահով փողոցը, որ միացնում է քաղաքի հայկական և թուրքական մասերը), ես համարձակութիւն ունեցայ գնալ այնտեղ առանց որ և է պահպանութիւն ունենալու։ Երբ ես գտնվում էի պօստատանը, այնտեղ, ներս մտաւ ի միջի այլոց տեղական թուրք հասարակութեան ամենաաչքի ընկնող գործիչներից մէկը՝ Ալէքպէր-բէկ Բաֆիբէկօվ։ Վերջինս մօտեցաւ ինձ, բարևեց և, ինչ որ բանի մասին խօսելով, անմիջապէս անյայտացաւ։ Ես ստացայ 50 բուբլի զրամական փոխադրութիւնը և 10—15 րօպէից յետոյ դուրս եկայ պօստատնից տուն գնալու։ Այդ ժամանակ, նախազգուշութեան համար, ես իմ շատի վերարկուս բաց արի, որի տակից պարզ երևում էր զառատատանական տեսչութեան համազգեստս, որը ես կարել էի տուել Գանձակի բանտի վերակացու եղածս ժամանակ և այժմ, այդ պաշտօնից հեռանալով և ստանալով քաղաքային բուժարանի վերակացուի պաշտօնը, հագնում էի, որ մաշուի։ Բայց 30 քայլ հեռու էի արդէն։ Բայց 30 քայլ հեռու էի արդէն։ Բայց 30 քայլ հեռու էի արդէն։ Յանկարծ ինձ վրա յարձակվեցին երկու թուրքեր, որոնցից մէկը զինված էր դրացանով, իսկ միւսը՝ խէնջալով, և բռնելով ինձ, հարցրին՝ «դու ես Գուրգենբէկովը»... Դրանցից պատասխան ստանալով, նրանք բռնի քարշ տուին ինձ դէպի անկիւնում սպասող կառքը և նկատելով ինձ՝ «դու, բանտի վերակացու էիր» և, նորից դրական պատասխան ստանալով, ուժով նստեցրին կառքի մէջ։ Ես, բնական բան է, ուզում էի բղաւել և օգնութիւն կանչել, բայց թուրքերը վայրկենաբար իմ վրա ձգեցին հափտանցին և բերանս փակեցին, իսկ կառքը սլացաւ դէպի թուրքական մասի խորքը՝ Բաղմանար։ Այդ ամբողջ տեսարանին ականատես էր եղել տիկին Արդասեսօվան՝ երկրագործական և պետական կալուածքների վարչութեան կառավարչի օգնականի կինը, որը, ինչպէս յետոյ ես այդ իմացայ, մարդասիրական զգացմունքից դրդրված, սկսել է օգնութիւն կանչել։ Մի և նոյն ժամանակ, ինձ հասած տեղեկութիւնների համաձայն, նա նկատել է դէպքի տեղից քիչ հեռու կանգնած պ. Բաֆիբէկօվին, տիկնոջ աղաչ բարձրացնելու համար հարցնում է. «Ինչ է պատահել»։ Ճանապարհին ես ջանք էի գործ դնում կառքից դուրս թռչելու, բայց չաջողվեց, որովհետև չարագործները բռունցքի հարուածներ իջեցնելով մէջքիս ու մարմնիս ուրիշ մասերին, ինձ կանգնեցնում էին։ Կառքը կանգնեց քաղաքի ծայրում մի այգու մօտ և այստեղ ինձ դուրս քաշեցին։ Զարագործները, կառապանին արձակելով, որին ոչինչ էլ չը վճարեցին, ինձ տարան քիչ հեռու և մերկացրին, թողնելով հագիս միայն անդրավարտիկ և շապիկս։ Ինձնից խլեցին բոլորը ինչ որ ունէի՝ ոսկի ժամացոյցս իր շղթայով և թանկագին մնացորդ, ոսկի մատանիներ, 89 բուբլի կանխիկ փող և այլն։ Դրանից յետոյ հրելով, տարան ինձ դէպի այգին. այդ միջոցին մէկը բռնել էր հրացանը պատրաստ, իսկ միւսը՝ խէնջալը մերկացրած։ Ես յենվեցի այգու ցանկապատի մօտ փողոցում եղած սիւներին և խնդրեցի հէնց այնտեղ էլ ինձ սպանել, եթէ որ նրանց այդչափ հարկաւոր է իմ մահը։ Բայց նրանք նորից սկսեցին ծեծել ինձ բռունցքներով և հրելով տանել առաջ։

Հէնց այդ միջոցին հեռուից երևաց մի կառք, որը արագութեամբ սլանում էր ուղիղ դէպի մեզ։ Չարագործները, առանց տեսնելու թէ ով է նստած կառքի մէջ, միաբերան ասացին, որ գա, երևի, Ռուստամ-բէկն է։ Եւ արդարև, երբ կառքը մօտեցաւ, նրա միջից դուրս թռաւ Գանձակի նահանգական վարչութեան թարգման Ռուստամ-բէկ Միրզոյեվը, որը կանչեց «եավաշ, եավաշ», մօտենալով ինձ, նա ասաց. «այժմ այլ ևս ձեզ չեն սպանի, մի անհանգստանաք». ես սկսեցի խնդրել ու աղերսել Ռուստամ-բէկին փրկել ինձ։ Նա ոճրագործներին մի կողմը տարաւ, ինչ որ բան ասաց գաղտնի և երեքով միասին տարան ինձ մի ինչ որ թուրքի տուն, որի բակում բազմաթիւ զինված թուրքեր կային։ Իմ երկրորդ խնդրելին՝ փրկել ինձ, Ռուստամ-բէկը ասաց, որ նա իմ մօտից չի հեռանալ, բայց քիչ յետոյ անյայտացաւ։ Այդտեղից թուրքերը ինձ տարան մի ուրիշ բաղ, որտեղ աւելի քիչ մարդ կար և այստեղ ինձ ուզում էին բանտարկել գոմում, բայց, մի թուրքի միջամտութեան շնորհիւ, այդ բանը չարեցին, այլ պահեցին մի բնակարանում։ Մէկ ու կէս ժամից յետոյ վերադարձաւ Ռուստամ-բէկ Միրզոյեվը Ալէքպէր-բէկ Բաֆիբէկօվի հետ միասին և տարան այնտեղից գեներալ-նահանգապետի մօտ։ Ըստ որում Բաֆիբէկօվը նախապէս հրաման տուեց ինձ. «տեսէք, այս դէպքի մասին չը խօսէք ոչ մի տեղ, ապա թէ ոչ, երկրորդ անգամ եթէ բռնվէք, այն ժամանակ ես երաշխաւորել չեմ կարող, շատ վատ կը լինի»։

Ահա այն բոլոր հանգամանքները, որոնց ժամանակ թուրքերը ինձ գերի վերցրին և յետոյ ազատվեցի։ Իմ ազատվելու պատճառները բացատրելու համար ես պէտք է շօշափեմ մի հանգամանք ևս։ Երբ հայկական մասում իմացան իմ գերութեան մասին զինված թուրքերի ձեռքով, ժողովրդի անգին բազմութիւնը ՄէՀէլօյ շրջանի առաջին փողոցը լցվեց, ուր այդ միջոցին պարապում էին չորս թուրք պաշտօնեաներ և շատ հեշտ կերպով կարող էր թշնամիներին իր դատաստանին մատնել։ Այդ դէպքի առաջն առնելու համար, իսկ գլխաւորապէս իմ կեանքս փրկելու համար, երգուեալ հաւատարմատար Բաբաքիվխով մտաւ շրջանը և առաջարկեց թուրքպաշտօնեաներին նամակ գրել Բաֆիբէկօվին անմիջապէս ազատելու ինձ գերութիւնից։ Թէ ինչու անպատճառ Բաֆիբէկօվին պէտք էր դիմել մի այդպիսի նամակով, դա այստեղ, Գանձակում, հասկանալի է ամենքի համար։ Տեղական մուսուլման աշխարհում նա համարվում է մի այնպիսի խոշոր գործիչ, առանց որի գիտութեան ու հաւանութեան այստեղ ոչ մի երեոյթ տեղի չէ ունենում։ Նա այնպիսի մի գործիչ է, որի հմայքին ենթարկվում են տեղական բոլոր թուրքերը, ի թիւս որոնց, դժբաղդաբար, և զինվորականները։ Որքան ինձ յայտնի է, Բաֆիբէկօվին խիստ կերպով հրամայել էր ինձ ազատելու համար նախկին գեներալ-նահանգապետ գեներալ Ֆէյզիերը։

Վերջացնելով իմ այս նամակը, չեմ կարող չաւելացնել՝ 1) Չէ կարելի համաձայնվել թուրք հասարակութեան ներկայացուցիչների առաձին՝ որ իմ վրա գործադրված վերոյիշեալ բռնութիւնը «որ և է խուլիգանների» գործ է։ Աւելին կասեմ՝ մասնաւոր և նոյն իսկ պաշտօնական խօսակցութիւնների ժամանակ, հայ-թուրքական ընդհարումների առիթով, թուրքերի ներկայացուցիչները պէտք կերպ աշխատում էին ապացուցանել, որ հայերի անգին ջարդը Գանձակում, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 18-ին, և մի քանի հազար զինված թուրքերի նոյեմբերի 22—23-ի գիշերը քաղաքի հայկական մասի վրա յարձակվելը, որ անաջող վերջացաւ, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ «որ և է խուլիգանների» արածը։

Ճշմարիտ է, այդ բոլորը ապացուցանում է թուրքերի հետևողականութիւնը իրանց պաշտպանած անարդար գործում, բայց լոգիկայի և առողջ դատողութեան վրա գործադրվող ամեն մի բռնութիւն, այնուամենայնիւ, պէտք է որ և է չափ ու սահման էլ ունենայ։ Եթէ նոյն իսկ համաձայնվենք թուրք ներկայացուցիչների հետ, որ յիշեալ անկարգութիւնները և բռնութիւնները «որ և է անյայտ խուլիգաններից» բարձրացած էին, ուրեմն չի էլ կարելի չը համաձայնվել և այն բանի հետ, որ այդ խուլիգանները շատ լաւ կազմակերպված էին։ Ուստի և պարտական հասարակութիւնը իր այդ, աւելի լաւ բանի արժանի, կազմակերպութեամբ, դրան կարող են պատասխանել միմիայն իրանք, «թուրք հասարակութեան ներկայացուցիչները»։

2) Ճշմարիտ չէ և այն, որ «անյայտ խուլիգանները պօստի մօտ յարձակեցին քաղաքացիական շորերով մի հայի, որը յետոյ իմացվեց, որ Գուրգենբէկօվը էր, Աֆանասիևի անունով կառուցված քաղաքային բուժարանի վարձովի վերակացուն»։ Նախ՝ ինչպէս վերևում յիշել եմ, ես պաշտօնագրեստ էի հագել, որը պարզ կերպով երևում էր վերարկուս տակից, երկրորդ՝ որ «խուլիգանները», ինձ բռնելուց ու Բաղմանար տանելուց առաջ, մանրակրկիտ կերպով որոնեցին իմ անձնաւորութիւնը և, երրորդ, բուժարանի վերակացուի պաշտօնը վարձովի չէ, այլ շտատով. և 3) Եթէ ենթադրենք, որ Ռուստամ-բէկ-Միրզոյեվը և Ալէքպէր-բէկ Բաֆիբէկօվը ազատեցին ինձ մարդասիրութեան ու ջենտլմենութեան զգացմունքից դրդված և ոչ թէ այլ հանգամանքներից, որը ասված է վերևում, ապա ուրեմն անհասկանալի կը մնայ՝ ինչու համար Ռուստամ-բէկը վրա հասնելով ինձ ու չարագործներին, իսկոյն և եթէ չազատեց ինձ, այլ կալանաւորելով, մի աւելորդ ժամ էլ պահեց և հնարաւոր համարեց ազատել միայն այն ժամանակ, երբ եկաւ ինքը Ալէքպէր-բէկ Բաֆիբէկօվը, որը, ինչպէս երևում է, համաձայնութիւն տուեց ազատելու։ Արդեօք այդ կարգազանութիւնը, որը զինուորականութեան է միայն յատուկ, այդ տեսակ մի գործում չէ՞ վկայում, որ ազգական թուրքերի մէջ գոյութիւն ունեն կազմակերպութիւններ, որոնք այնքան էլ լէգալ նպատակներով չեն զինվարվում, եթէ չասենք աւելին։

Օգտվելով առիթից, շնորհակալութիւնս եմ յայտնում Ռուստամ-բէկ Միրզոյեվին, որ այսպէս թէ այնպէս անմիջական կերպով փրկեց ինձ վերահաս մահից։ Իսկ Ալէքպէր-բէկ Բաֆիբէկօվից շատ շնորհակալ կը լինեմ, եթէ նա միջոցներ ձեռք կանէ վերադարձնելու ինձանից կողոպտած արժէքաւոր իրերը և փողը, ըստ որում մի րօպէ անգամ ես չեմ կարող կասկածել նրա գիտցական ոյժի և ընդունակութեան վրա՝ ինձ այդ շնորհը անելու։

Գանձակի քաղաքային բուժարանի վերակացու Նոդէլօրին-օսվեանցի Աղէքսանդր Իսահակովիչ Գուրգենբէկով։

Ց. Գ. Խնդրում եմ «Кавказъ» և միւս թերթերն արտատպել իմ այս նամակը։

Ա. Գ.

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՂՔԵՏԱՆԵՐԻՆ

Իրանց եկամուտի 1%-ը հայ աղքատանոցներին յանկացնելու համար նոյեմբեր ամսից սատրագրել են՝ Յ. Խաչատրեան—20 կ., Աստղիկ Միրաքեան—30 կ., Արտեմ—1 ր., Ալէքսանդր—30 կ., Վասիլ Տէր-Մարտիրոսեան—30 կ., Օհաննէս Յովասափեան—30 կ. և Գալուստ Քամարեան—50 կ.—բոլորը 7 հոգի՝ նոյեմբեր, դեկտեմբեր և յունվար ամիսների վճարը 8 ր. 70 կ.։ Աւելացնելով դրա վրա նախկին (տ. «Մշակ» № 220) հոկտեմբեր ամսից տարագրած 16 հոգու երեք ամսվճարները—13 ր. 75 կ. (Ա. Շ., Վ. Գ. և Խ. Յ. քաղաքից հեռանալով՝ գումարը (15 ր.) պակասում է 1 ր. 25 կոպէկով), գումարը լինում է 22 ր. 45 կ.։

Խնդրում ենք տարագրել ցանկացողներին դիմել Խրիսանցի խանութը՝ Երևանեան հրապարակում։

* * *

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՍՔԸ

II

Գիվազա։ Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ծրագիրը, անկասկած, գեղեցիկ է, բայց մեզ կովկասցիներիս համար չափազանց կարևոր է գիտենալ թէ ինչ կազմակերպութիւն պէտք է տանայ մեր Անդրկովկասը, իսկ այդ հարցի պատասխանը չենք տեսնում ծրագրում։

Նախագահ։ Մենք ևս գիտակցել ենք այդ կարևորութիւնը, բայց կարծել ենք, որ ծրագիրը պէտք է մշակվի շատերի գործակցութեամբ և մասնակի օգնութեամբ։

Կիմեենիիվ։ Ցանկալի է ձեռք բերել աւելի ազատ և նպաստաւոր պայմաններ ընտրողական ագիտացիա անելու։

Զգանեվիչ։ Ընտրենք բիւրօի դարձեալ 12 անձ և նրանց յանձնենք կազմակերպել ժողովներ քաղաքամասերում։

Բժ. Սահակեան։ Ես չեմ համարում կուսակցութիւնը դեռ կազմակերպված, ուստի աւելի բարեաւ եմ համարում թողնել հին բիւրօն, մինչև նա վերջացնի կազմակերպական գործը։

Պ. Դոլուխանով։ Պէտք է ընտրել նոր բիւրօ, որովհետև առաջինի լիազօրութիւնները արդէն վերջացած են և բիւրօի կազմից դուրս են եկել մի քանիսը։

Պ. Աղոյանցկիի։ Պէտք է վերանորոգել բիւրօն։ Նախկինը ընտրված էր 44 անձի կողմից, իսկ այսօր ժողովականների թիւը 100-ից աւելի է։

Բժ. Մարկեվիչ։ Կուսակցութիւնը բոլորովին պէտք է համարել կազմակերպված, որովհետև ծրագիրը յայտնի էր ու որոշ և ամենքս գիտէինք թէ ինչ էինք ընդունում և ուր էինք անդամ մտնում։

Բաբօվ։ Ես կարծում եմ, որ կարող եմ մասնակցել, մասնակցել կուսակցութեան ֆրակցիաներից մէկի մէջ։ Զը պէտք է վախենալ հասարակութեան ապա մուտքից դէպի մեր ժողովները։

Նախագահ։ Մենք ոչ միայն չենք վախենում, այլ ընդհակառակը ցանկանում ենք, որ կուսակցութեան համակրողների թիւը մեծանայ։ Բայց այժմ մենք դեռ կազմակերպվում ենք և ցանկանում ենք, որ մենք միախոհ անձերս հաւաքված ընտրենք բիւրօ։

Ժողովը ձեռնարկեց ընտրութիւնների։

ԱՒԱՋԱԿՈՒԹԻՒՆԸ ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մէբէլդա, յունվարի 27-ին

Թէև սպանութիւնները դեռ կոտրած բնաւորութիւն չեն ստացել, սակայն աւազակային հաճ ու կտոր սպանութիւնները, խմբական յարձակումները գալիս են գուշակել տալու այն տխրալի իրականութիւնը, որ ամեն մի բանիմաց մարդ կարող է պատկերացնել, երևակայել։ Ամեն օր, ամեն րօպէ, հէնց կողքումդ, լուրիր, լուրիր, որոնք մէկը միւսին յաջորդում են ատաճանաբար, առանց շեղվելու, կարծես, բնական օրէնք լինի, ապացուցված թէ տեսրէմում կամ աքսիօմա։ Մարդս ինքն իրան հարց է տալիս,—չէ կարողանում պատասխանել. դիմում ես կողքիդ կանգնողին,—ստանում ես ոչ-զոհացուցիչ պատասխան։ Մնում ես շուարած, թմրած, աչքերդ մթնում, ուղեղդ ծանրանում. կարծես վիրդ չէ կարողանում կշռել գլուխդ, և թեքվում է դեռին, և յանկարծ ամկայից յուզված ստիպվում ես արտասանել. «Սպանիր, մի սպանիր. կողոպտիր, մի կողոպտիր»։ Ահա սա է ներկայիս վիճակը. այս հանգամանքը արդէն բնական օրէնք է դարձել։

Շատ անգամ, համարեա քիչ բացառութեամբ, քեզ կողոպտելիս, աւազակները բացականչում են. «Էրթօբա» և կողոպտում, քիչ-քիչ համոզում, հաւատացնում քեզ, որ իրանք էլ այս «հաւասարութեան տարիներում» քոնից բաժին ունեն։ Սակայն նրանք ստապակ են, և դաւանանում են այդ էրթօբայի սկզբունքին, դաւանանում նաև ամենի աւազակի սկզբունքին, հանելով ոտքիդ հին գուլպաները, կողոպտելու նպատակով։ Աւազակները գիւղից 5 վերստ հեռու ձիերից 4-ի պայտերը հանում են, որպէս զի հետքերից չկարողանան թէ ուր են տարվել (նրանց կողմի ձիերը մեծ մասամբ պայտ չեն ունենայ), իսկ ձիերից մէկի պայտերը չեն կարողանում հանել, ձիապանին դնում են այդ ձիու վրա և ասում. «գնա, բարեւիր Կիւրիւնեանցին, թող գայ, ձիերը յետ վերցնի, եթէ կարող է»։

Զիերը դեռ չեն գտնվել, բայց յոյս կայ, որ կալուածատէր արքաղ Շերվանը, պահակախմբի առաջնորդը, եթէ ուզենայ, կարող է գտնել, իսկ եթէ ոչ, պէտք է հասկանալ, որ «բանի մէջ բան կայ, ակի մէջ թան կայ»։

Մօտ օրերս, այս զէպքից քիչ առաջ, Ծէբէլդա գիւղից մի քանի անձնաւորութ

հոդսերից մէկին է դարձել և բուսական զուտաբ քաղաքը ծախսեց մի քանի տարի առաջ այդ ժայռը անվանդ դարձնելու համար՝ յատուկ ինժիներների հսկողութեամբ որոշ աշխատանքներ կատարելով այդտեղ։ Չը նայելով դրան՝ կաթվող ջրերից ժայռը փոքր առ փոքր փըլչում է և ժամանակ առ ժամանակ դարձեալ ժայռի վերևի մասերից վայր են թափվում տեղին մեծութեամբ քարի կտորներ, որոնք, անտարակոյս, վտանգ են սպառնում երթևեկողներին։ Ներկայումս ժայռի տակ, Ցիցեանովի զառիվայրի վրա, դարսած են Հալաբար առնող էլեքտրաքարշի երկաթեայ ձողերը և Մաղի վրայով շրջապատող էլեքտրաքարշի մի ճիւղը այդ գծով անցնելու է մտրիկ ապագայում յիշեալ զառիվայրով։ այս հանգամանքը աւելի ևս տիպում է մտածել՝ մի արմատական միջոց գտնելու, ապահովացնելու համար ժայռի տակի փողոցով անցողների կեանքը։ Քաղաքային վարչութեանը ներկայացրած է՝ հիմնաւորապէս ժայռը անվանդ դարձնելու համար մի նախագիծ, որը պահանջում է 40,000 ռուբլուց աւելի ծախս. քաղաքային իրաւասու պ. Միրզոյեանը իր կողմից գտել է և կազմել է մի նախագիծ, որի իրագործումը կը պահանջէ, նրա հաշուով մինչև 20,000 ր.։ Ցանկալի է, որ այս նախագիծը քննութեան առնվէր քաղաքային խորհրդի կողմից և օր առաջ, նախապատրաստելով չարիքը, վերջ դնվէր այդ երկար տարիներ ձգձգվող անյուսալի խնդրին։

—

Քանի ժամանակ է, որ Թիֆլիսի զբաղանոցները, որոնք ամեն օր բնակիչների զբոսանքները դասարկում էին զլխաւորապես էլեկտրաքարշի կայարանների մօտ՝ հասարակութեան ձեռքով որոշ պահիներ կրելուց յետոյ՝ դադարել էին զբաղանոցութիւնից։ Ներկայումս տիրող կարգերը, երևում է, դրանց դուռ են եկել և էլի սկսել են իրանց արշաւանքները։ Մանաւանդ զանց արարքները զգալի են իշխ. Վաղինսկու արձանի մօտ, որտեղ երկու էլեկտրաքարշի կայարաններ կան՝ մէկը՝ որ տանում է դէպի Միքայէլան պրոսպեկտ և միւսը՝ Սալոր։ Այդտեղ ժողովուրդը միշտ բռնված է լինում և զբաղանոցները իրանց գործը ճարպիկութեամբ կատարում են։ Մի խումբ զբաղանոցներ գոյութիւն անելուց յետոյ մնում են կողքի զինեանոցը և միւս գունից դուրս գալիս և անհետանում։ Այդ բանի վրա ուշադրութիւն էր դարձրել զինեանոց կառավարիչ Սալիրիգոն Արշուանէն, փետրվարի 9-ին հետևեալ դէպքն է տեղի ունենում, երբ զբաղանոցները մի օրի գըրպանից հանում են 600 ռուբլի և մտնում են իշխ. Վաղինսկի արձանի դիմաց Փարսադանովի շէնքում գտնվող զինեանոցը, որ միւս գունից դուրս գան և անհետանան, զինեանոց կառավարիչը մէջտեղում է գործէն, բայց զբաղանոցներից մէկը բերանքով վերջ է հացնում նրան և անհետանում։ Վիրաւորվածին բժշկական օգնութիւն հացնելու համար տանում են Միքայէլեան հիւանդանոց։ Զարմանալի է, որ այդ զբաղանոցները, որոնց իրագէպ մարդկանց ասելով, ճանաչում են ամեն օր արձանի մօտ կանգնած օրապահ ոստիկանները՝ կարողանում են այնու ամենայնիւ անպատիժ շարունակել իրանց արարքները։ Վիրաւորված Արշուանէն արդէն նոյն օրը գիշերով վախճանվեց։

—

Որոշ կողմանքի լարտերներ տների առաջ վառելու համար տանտէրերին տուած վերջին ժամանակամիջոցը նշանակված էր մինչև փետրվարի 10-ը։ Մեծամասնութիւնը այդ պարտադիր կարգադրութիւնը կատարել է, իսկ մի մասը չը կարողանալով. նշանակած ժամանակին կատարելու խնդրել է ժամանակաւոր նահանգապետից դարձեալ երկարացնել ժամանակամիջոցը։ Այս վերջին խնդրի համաձայն դարձեալ 10 օր՝ այն է մինչև փետրվարի 20-ը ժամանակ ունեն տանտէրերը, որից յետոյ չը կատարողները ենթարկվում են պատասխանատուութեան։

—

Ուրբաթ, փետրվարի 11-ին, քաղաքի 8-րդ մասում, հաշտարար դատարանի 4-րդ բաժանմունքի շէնքում, ուր գիշերը հրդեհ հանգրվանված են շէնքի մի քանի մասերը։ Հրդեհը հանգցրին հրդեհաշէջների միջոցով։ Դատարանի գործերը այլուրեք աղատվեցին։

—

Թիֆլիս քաղաքի և նրա գաւառի ժամանակաւոր զինեալ-նահանգապետը, աչքի առաջ ունենալով «Нов. Обозр.» թերթի խմբագիրը հրատարակչի զիմումները և խմբագրութեան ծառայողների ու, նամանաւանդ, տպարանի բանւորների դժուար կացութիւնը թերթի հրատարակութեան դադարեցման մասին իր արած կարգադրութեան պատճառով, և, յոյս ունենալով, որ այսուհետև այդ թերթի խմբագրութիւնը աւելի ուշադիր կը վերաբերվի իր նախազգուշացումներին, հնարաւոր է համարում թոյլատրել երդուեալ հաւատարմատար Կ. Ի. Քալանթարովին շարունակել «Нов. Обозрѣніе» թերթի հրատարակութիւնը ամսոյս 10-ից։

—

Թիֆլիսի գաւառում՝ գերմանական գաղութներից ոչ հեռու գտնվող Սարթաճալա գիւղի բնիկներից, դեռ ևս Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, քշել տարել էին Գրիգոր Արէշնանի նախիրը, որից քիչ յետոյ մի մասը վերադարձել էին։ Մօտ ժամանակներս, ինչպէս պատմում են, 12 հոգուց բաղկացած ու բերդան հրացաններով զինված թուրքեր նորից են յարձակվել այդ բնիկների վրա ու քշել տարել են մնացած նախիրն էլ։

—

Մենք այս օրերս հաղորդել էինք մեր լրագրում, որ Անդրիովկասեան երկաթուղին չունի հարկաւոր քանակութեամբ ապրանքատար վագոններ և այս հանգամանքը դանդաղեցնելով ապրանքների արագ և ժամանակին տեղ հասցնելը, շատ դժուարացնում է առևտրականների և արդիւնաբերողների գործունէութիւնը, նպաստում է ապրանքների թանդանալուն և հետևաբար աւելորդը հանիսանում է սպառող ժողովուրդը։ Այդ վերին ասիճանի կարևոր խնդրի վրա դարձել է ուշադրութիւն հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը և կարգադրել է ժամանակաւորապէս ամբողջ Ռուսաստանի երկաթուղիների ապրանքատար վագոններում փոխանակ ընդունված կարգով 600 պուդի՝ բարձել 900 պուդ։ Վագոններ չը լինելու պատճառով անկասկած՝ այս միջոցը դեռ մասամբ կը թեթևացնէ ժողովրդի վիճակը ընդհանրապէս և առևտրական-արդիւնաբերական դասակարգինը մասնաւորապէս։

—

Ստացանք մի նոր գիրք «Մեծ Մարդասպանի Դեմ», որ պարունակում է 1905 թ. Նոյեմբերին Կ. Պոլսում կատարված Սուլթանի մահափորձի դատավարութիւնը։ Գիրքը տպված է Ժենիվում։ Այդ դատավարութեան մանրամասնութիւնները արդէն յայտնի են «Մշակի» ընթերցողներին։

—

Հինգշաբթի, փետրվարի 9-ին, Վարդանանց տօնի օրը, հայ գերասանական խումբը ներկայացրեց «Շուշանիկ» պիեսան, որ 20 տարուց ի վեր արգելված էր։ Թատրոնը ծայրէ ծայր լի էր։ Այդ ներկայացումը կը կրկնվի այսօր, կիրակի։

—

Փետրվարի 15-ին քաղաքային խորհրդի քննութեան համար նշանակված են 15 հարցեր, որոնցից հետաքրքիրները սրանք են՝ 1) քաղաքի 1906 թ. եկեմուտքի հաշիւը 2) Նաւթլուղի հողերի մասին, որոնք յատկացվել են Անդրկովկասի երկաթուղու պէտքերի համար, 3) Ցանձնաժողովի ընտրութիւնը՝ քաղաքիս մէջ կատարված աւերմունքների վնասները լուսաբանելու։

—

Վերջին աղէտներից վնասված հայ բնակիչների օգնի ստացանք. 1) Ալէքսանդրօվսկի ֆօրտ՝ Ամ. Բաղիեանցի ձեռքով հաւաքած 10 ռուբ., 2) Կամարանից և Իզմիրլուանից (Էլ-Օբէիդ) 20 ռուբլի, 3) ուսուց. Թ. Պետրոսեանից (Մոնի) 1 ր. 40 կոպ., 4) Նոր-Նախիջևանից՝ Յակոբ քահանայ Նախշանեանից 1 ռուբ., 5) Մոսկվայից՝ Կ. Էլէքիէկեանի ձեռքով հանգանակած 187 ռուբ., 6) Տիգրան Թիւրուխանից 5 ռուբ., 7) Վարդան Լարիգեանից (բանի կեր ղով մանմեղանացրած կրզենցիների օգուտն) 15 ռ.։

—

Մենք ստացանք Միքօ Սարգսեանից մէկ ռուբլի աղետեալների օգտին։ Սարգսեանը ինքը թիւրքահայ է և Թիֆլիսում բանւորութիւն է անում։ Ինքնաբերաբար որոշել է իր վաստակներից իւրաքանչիւր ամիս տալ մի մի ռուբլի։

—

Պետերբուրգում դարձեալ սկսեցին խուզարկութիւններ և բանտարկութիւններ. կալանաւորված են շատ ուսանողներ և բանւորներ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը Բարձրագոյն հաւանութիւն ստացաւ մինիստրութեանը իրաւունք տալ առանձին կարգի մասնաւոր գիմնազիաներին կոչվելու «մասնաւոր բէալական գիմնազիաներ», տալով դասընթացը աւարտող աշակերտներին նոր տիպի իրաւունքներ, որոնցով օգտվում են պետական բէալական գիմնազիաները։

—

Պետերբուրգի Ադմիրալտէյսկի քաղաքամասի սանմանադրական-ռամկավար կուսակցութեան բիւրոյին մի շարք դիմումներ են տրել՝ պետական ծառայութեան մէջ գտնվող և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ ծառայող մարդկանց որոշ խմբերի՝ առաջարկելով ընդունել իրանց սանմանադրական-ռամկավար կուսակցութեան մէջ «գաղտնապէս»։ Նրանք համաձայն են իրանց ձայները տալ սահմանադրական-ռամկավար կուսակցութեան թեկնածուներին, բայց անդամ գրվել կուսակցութեան մէջ չեն կարող, որովհետև երվիում են կրում իրանց պատօնեներից. իբրև պարտաւորեցուցիչ պայման, նրանք առաջարկում են, որ ամեն մի խմբից ներկայացուցիչ լինի բիւրոյում։ Այդ առաջարկութիւնը կուսակցութիւնը ընդունեց համակրանքով։

—

Մօտ ժամանակներս նախնական բանտարկութեան տան մէջ պահվող կալանաւոր կանայք, որոնք մեղադրվում են քաղաքական գործերով, կանչեցին իրանց մօտ բանտապետին և գանգատվեցին նրան ժանդարմների փոխադրվելու վրա, որը կրճատում է «քաղաքական» մեղադրեալների տեսակցութեան ժամերը իրանց հարազատների հետ մինչև 3 րօպէ, թէև տեսակցութիւնը 5 րօպէ է սահմանված։ Գանգատի հետևանքը այն եղաւ, որ տեսակցութիւնները վերջին շաբաթվայ ընթացքում աւելի ևս կրճատեցին. այսպէս օրինակ, փետրվարի 3-ին տեսակցութիւնը մի քանի «քաղաքական» մեղադրեալների հետ տևեց $1^1/_2$ րօպէ միայն։ Բանտարկիածների բողոքները ոչ մի հետևանք չունեցան։

—

Թէ Ռուսաստանի մէջ տիրող խռովութիւնների որպիսի նեթական ծանր նեղութիւնների մէջ ընկաւ ժողովուրդը՝ այդ մասին մայրաքաղաքի լրագիրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում։ Միայն Պետերբուրգում աշխատաւոր դասակարգը լօմբարդներից փոխ է առել 1,500,000 ր.՝ գրաւ դնելով շորեղէն, ոսկեմանեներ, հեղուռներ, զրպանի ժամացոյցներ և նման իրեր։ Գրաւ դրած իրերեղէնների տէրերի առապին մեծամասնութիւնը չէ կարողացել թափել գրաւները և թողել է աճուրդի հանել, իսկ միւս մասը հաւիս տոկոսը վճարելով յետաձգել է գրաւ դրած զրպանի ժամացոյցներ և նման իրեր։ Գրաւ դրած իրերեղէնների տէրերի առապին մեծամասնութիւնը չէ կարողացել թափել գրաւները։ Ինչպէս գրում է «Военный Голосъ» լրագիրը հաղորդում է, որ ծովապետ Դուբասովի հրաժարականի լուրը հաստատվում է։

—

Որպէս հաղորդում է «Наша Жизнь» լրագիրը, Անդրիովկասեան երկաթուղու ամբողջ գծի վրա գործադուլների համար արձակված ծառայողների թիւը հասնում է 1,100-ի։ Շարունակում են դեռ էլի արձակել։

—

Կառավարչական նոր օրգան «Русское Госуд. Слово» լրագրի դէմ՝ լրագրավաճառները բոյկոտ են հրատարել՝ հրաժարվելով ծախելուց, այնպէս որ խմբագրութիւնը ստիպված է իր համար սեպհական մարդիկ վարձել։

—

Կրոնշտադ քաղաքի հրամանատարը, որի իշխանութեանը ենթարկվում է այդ քաղաքը, հրէաներին չէ թողնում Կրոնշտադ մտնել մինչև անգամ բարձր ուսում ստացած հրէաներին արդիւնած է Կրոնշտադ մտնելը։

—

Մինչև կարգ ուսումնարան աւարտողներից համալսարան մտնելու նախապէս՝ 1602 թ. քննել մեղադրող իշխանութեան 50 վիճաներին։

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ, 9 փետրվարի։ Դեկտեմբերին Ուրուպի գունդը ներկայացրեց նիթական պահանջներ, խնդրեց ազատել նրան քաղաքային ոստիկանական պարտաւորութիւնից և հրաժարվեց կրակ անել խաղաղ բնակիչների վրա։ Պահանջները չը գնահատվեցին. գունդը հրաման ստացաւ ցրվել տները։ Ցուսվարի 4-ին շրջանի գնդապետը հրաման արձակեց զօրքին, թոյլատրելով բոլոր ստանիցաներում ժողովներ կարգապահութեան հարցերի որոշման համար։ Ուրուպցիների հարիւրեակը ամբացաւ Գիպպինի ստանիցայում, ուր հաւաքվեց նաև ամբողջ գունդը և պլատատունների երկու բատալիոն։ Օգտվելով շրջակայ ստանիցաների համակրութիւնից, լուր տարածվեց, որ Գիպպինում զօրքերը ամրութիւններ են կառուցել և ամեն մի մարդ 100 փամփուշտ ունի։ Դրանով օգտվեցին ագիտատորները և յեղափոխականները մի խումբ, որոնք փախել էին Սօչիից և Նովորոսիյսկից։ Փետրվարի 6-ին Գիպպին եկաւ շրջանի պետը կոզակների հետ։ Այսօր «Կուբան» լրագրում տպված է, որ ուրուպցիները անձնատուր են եղել և երդումն ընդունել։

ԲԱԳՈՒՈ, 10 փետրվարի։ Գիշերը խուզարկութիւն կատարվեց Նաւթարդիւնաբերողների ժողովի գրասենեակում։ Ոչինչ չէ գտնված։ «Իրաւդ» լրագրի խմբագիր Աղաեվին թոյլատրված է հրատարակելու ռուսաց լեզուով լրագիր «Ցառայագիմութիւն» և թուրքերէն՝ «Տարաջիզ» անունով։

ԲԵԼԳՐԱԴ, 10 փետրվարի։ Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն՝ Սերբիայի և Աւստրօ-Ունգարիայի ներկայ դաշնադրութիւնը կը տևի մինչև յունիսի 5-ը։ Աւստրօ-Ունգարիան չէ պահանջում սերբ-բոլղարական մաքսային դաշինքը խախտելը, այլ միայն փոխելու սահմանային առևտրի 2-րդ կրկին ներմուծման 3-րդ կէտերը։ Այս կէտերը մաքսային դաշինքի պայմանի ամենաէականներն են։

ՀԷԼՍԻՆԳՓՕՐՍ, 10 փետրվարի։ Գեներալ-նահանգապետի հրամանով հաղորդված է Ուլեօրսորի Նահանգապետին դնեմարքի և գենքերի ներմուծման մասին, որ բերվում է իբր թէ Շվէդիայից՝ Լուլեօի և Յապարանդայի միջոցով Ֆինլանդիան։ Պատուիրված է քննել այդ հարցը։ Տօրնէօ և Կէմի մագիստրատները հաղորդեցին, որ այդպիսի ներմուծում չէ եղել։ Նահանգապետը հրամայեց ուժեղացնել հսկողութիւնը սահմաններում։

ՊԱՐԻԶ, 10 փետրվարի։ Այժիրից հեռագրում են, որ «Օլէգ» նաւի հրամանատար Դօբրօսաբսկին զգալի կերպով ջարդված է աւտոմոբիլից։

ՎԱՐՇԱՎԱ, 10 փետրվարի։ Վարշավայի օֆիցիէրների խնայողական ընկերութիւնն առաջարկում է հրատարակել Վարշավայում ամենօրեայ պատկերազարդ լրագիր։ Առևտրի մինիստրութիւնը թոյլատրել է Վարշավայի վաճառականների ընկերութեան բանալ առևտրական դպրոցներին կից գիշերային վաճառականական կուրսեր—դասաւանդելով լեհական լեզուով։

ՎԱՐՇԱՎԱ, 10 փետրվարի։ Վերջին տարիներս երևան եկան շարժում Պոլսկի թեմի սորին կսկնդների մէջ, որ տարածվեց շուտով միւս տեղերում։ Յայտարարելով, որ ծընվել է սուտ քրիստոս...

ՎԻԵՆՆԱ, 10 փետրվարի։ Կառավարութիւնը պատրաստ մտրից ընտրողական իրաւունքի բէֆորմների հինգ օրէնսդրութիւն։ Պատրաստ հարիւրի հինգ հարիւրից 455 ներկայացուցիչներ։ Ընտրողական իրաւունքով օգտուում է ամեն մի 24 տարեկան քաղաքացի, եթէ մի տարի միայն անց է կացրել աւտարական հասարակութեան մէջ։ Պատրաստ համար իրաւունք ունեն ընտրվել ամեն մէկը, որն երեք տարի աւտարական հպատակ է եղել։ Ամեն մի ընտրող բաժին ընտրում է մի պատգամաւոր։ Ընտրողական շրջանները կազմելու ժամանակ հոգ է տանվում, որ նրանք երեսային ազգային մի միութիւն։ Ընտրողական իրաւունքի հաւասարութեան հարցը օրէնսդրութիւնների մէջ ստացաւ որոշ նշանակութիւն։ Ընդհանրապէս մտադրվում է կազմել մի պատ, որ բաղկացած լինի 205 գերմանացիներից, 230 սլաւոնոներից, 16 իտալացիներից և 4 ռումինիներից։ Ազգանութեամբ—նրանք բաժանվում են հետևեալ կերպով—սլաւոնների մէջ մտնում են 99 չեխեր, լեհերի՝ 64, ռուսինների՝ 31, սլովենները 23, խորվատներ—13։ Ռուսինների պատգամաւորների թիւը աւելանում է մինչև 21-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Գլխաւոր շտաբը բացատրեց, որ մինիստրների դեկտ. 11-ի որոշումը, որ թոյլ է տալիս պաշտօնեաներին հակվել քաղաքական կուսակցութիւններին, բացի նրանից, որոնք ձգտում են կործանել ներկայ պետական կարգը, չէ վերաբերում զինուորականներին և զինուորական վարչութեան քաղաքացիական պաշտօնեաներին, որոնց վերաբերմամբ մնում է ամբողջ ոյժով արգելքը, ինչպէս չը մասնակցելու քաղաքական կազմակերպութիւններին, այնպէս և ներկայ լինել այն ժողովներում, որտեղ քննադատում են քաղաքական հարցեր։ Փետր. 11-ին Պարսկաստան է մեկնելու մի յանձնաժողով ընդունելու Էնղէլի-Ռէյշ-Կազվին-Համադան և Ջուլֆա-Թաւրիզ վերջացրած շօսէյնի ճանապարհները։ Երէկ Յարսկօէ Սէլօյում Կայսեր ներկայացաւ Վլադիմիրեան ռազմական-կանութեան պատգամաւորութիւնը, որի մէջ մտնում էին շտապյուէյսաէր իշխան Գոլիցինը, նահանգական պարագլուխը, Ալէքսանդրեան գաւառական պարագլուխը, Սորոմիսովի պաշտօնակատարը և Մելինկօրսկի գաւառի պարագլուխ Դուբէյկին։ Պատգամաւորութիւնը մատուցեց Կայսրին խորին հպատակութեան հաւատարմութեան մի գրութիւն։ Կայսրը արժանացրեց պատգամաւորութեան ողջոյնի խօսքերի։—Քննութեան մեկնումից վերադառնալով, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը իր արձակած հրամանում յայտարարում է, որ ստորին ծառայողների մէջ սրած պրօպագանդայի մեծ կամ փոքր աղդեցութիւնը կախված է եղել բարձր և ստորին ծառայողների յարաբերութիւնից։ Այնտեղ, որտեղ բարձր ծառայողները մօտ են կանգնած ստորիններին և թափանցել են նրանց կարիքների մէջ, պրօպագանդան աղդեցութիւն չէ ունեցել, իսկ որտեղ էշխել է ձեւականութիւնը, որ խանդարում է կենդանի յարաբերութեան, գործադուլը լայն չափեր է ընդունել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԷԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիտ, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ե. Մ. ՔԻԿՕՉԱՆ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հ.
Ն. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ղ. Գ. ԿԱՐԱԳՈՅՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՈՒՆ-ԲԱԹԵՆ Ա. Ի. ՇԱՆԳԻՐԻՆԵՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկաստ.։
Ա. Դ. ԱՒԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԻԱՆ—7—7½ ժ.
Գնաց 50 կ. դեղատները ձրի հանձնարարելի (դօն ալեսամ) և օգնեցցիչի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ժամական ժամհակալներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կանանց և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ներքին, ներքին հ և նեարդ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԳԻՍՕՐԵՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՅԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԻՏՅԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդացողները բժշկում են հիպնոզով, կատարվում միկրոսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոմպէօ և ծաղկատուութիւն և մանասունների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օգնեցցիչի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերային հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընտրեալ սենեակներից և առանձին նոմերներից։
(չ.ու.կ.) 37—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կոշտի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրոսպեկտի և Կազետնայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազետնայի փողոցից № 2,
(ա. օ.) 88—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԻՒԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու սխտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօյակ, անկիւն Բեքուսովսկի և Պասկևիչ փող. № 32/15 տ. Մարիամեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 42—100

ԲԺԻՇԿ
Տ. Իսահակեան
Ներքին, երեխայոց և վեներական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վիլեամինսկայա փողոց, № 22, Նաւարիզովի տունը։
(չ. ու. կ.) 2—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՁՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վիլեամինսկայա փողոց № 8։ (հ.ո.) 41—24

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 49—100

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Դեղեվանօվի
Զրպային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրպանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆոն № 791։ (ա. օ.) 64—150

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂՆԻՔՍԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, որ այս տարվայ փետրվարի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին կատարվում է տարբ. 7-րդ քաղաքամասում գտնվող Լազարէվսկի փողոցի ջրմուղի վերանորոգութիւնը, 128 քառ. սաժ. բեռնի խողովակի երկարութիւն «0,375, 0,25», 4։
Գրաւոր բացատրութիւնները յիշեալ աշխատանքի գնահատման հետ միասին պէտք է տրվեն փակած ծրարներով այս տարվայ փետրվարի 15-ը։
Սակարկել ցանկացողներին։ 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, փետրվարի 12-ին կը կայանայ
ԿՕՆՑԵՐՏ
Մասնակցութեամբ տա. Իրա Շուլց, Բիլոտեր, պրոֆես. Բրոյժի, տէնօր Ս. Ա. Բարխուդարեանի և Գ. Քանանեանցի։
Սկիզբը երեկոյեան 7½ ժամին։
(չ.կ.) 2—2

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը։
Հայ հեղինակներ. ը. տպ. բարեփոխած, հարստացրած. Գ. Վանցեանի. գ. 1 ր.։
Գալօ Ամօ եւ Խաչան. Մ. Բամալեանի. գ. 12 կ.։
Մի ամիս Աբեւելքում. Հ. Առաքելեանի. գ. 40 կ.։
Նախագիծ Հայաստանեայց եկ. սահմանադրութեան. Ա. վարդ. Զրոճեանի. գ. 7 կ.։
Կնոջ ճերկայ եւ ապագայ դերութիւնը. Բէբէլ. թարգ. օր. Ս. Շահնազարեան. գ. 10 կ.։
Սիրոյ ցաւութիւն. Ցար. Նազանեանի. գ. 10 կ.։
Մեր ճանաչնչերը. Կամերդիա երեք արարուած. Ց. Ս. Կուսիկեանի. գ. 1 ր.
Երկասիրութիւնների բ. հատ. Պատկանեանի. գ. 1 ր.։
Լուսադեմին. Եժ. գ. 1 ր.։
Սեիրի Աղջիկը, Լէօ. գ. 1 ր. 50 կ.։ (կ.) 1—1

ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ
ՍԱՊՕՆԸ
ԳԼԻՑԷՐԻՆԻ ՍԱՊՕՆՆ,
որ ունի իր հետ ասեղնագործութեան համար ռուսական նորագոյն նկարներ։
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
(15) 6—12

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՌՈՒԲԼԻ
Ծանօթութիւն. Բաժանորդագրութիւնը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 ռուբլի։ Հայոց դպրոց. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միմն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագրութիւն է 8 ռուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագրութիւնը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալներ.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բալախանի—բժ. Բ. Օհանեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Մաչարեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան։
Սօչի—պ. Սրամ Յակոբեան (Սեւծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկզիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Սիմֆերօպօլ—պ. Նիկ. Հայրապետեան։
Թիֆլիս—«Գուսանների», «Կենսրն.», «Զ. Գրիգոր. գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկաւկազ—Ց. ք. Սաուիկան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Ց. Տէր-Ստեփանեան և պ. Հ. Պանիրեան։
Եգիպտոս—դոկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան։
Նոր-Զուղա—պ. Տիգրան Արգարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թունեանց և Լ. Բաբայեան։
1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրի։ 8—10

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիա։ Բերլինում հրատարակվեց մի կոչ, որով առաջարկվում է արձան կանգնեցնել Էշենէյին՝ նրա մահվան յիսնամեայ տարեդարձի առիթով։

Մարոքոյի հարցը։ Ֆրանս-գերմանական յարաբերութիւնների նոր ֆազիսի մասին շատ լաւ հակացուցութիւն է տալիս հետևեալ պաշտօնական հեռագիրը, որ Բերլինից ուղարկված է «Կեօնիի» լրագրին։

«Ֆրանսական մամուլի տրամադրութիւնը քիչ է նպաստում համաձայնութեան ծօրէնը միայնակ է՝ պաշտպան իր կարծիքի, որին ոչ ոք այլ ևս համամիտ չէ։ Կլեմանսօն վտանգ